ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2

№ ԲՄԾՁԲ-7/5-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 16.04.2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից «Ոսկե Կար» ՍՊԸ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Ֆրանգյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 06.04.2018թ. կնքված № ԲՄԾՁԲ-7/5-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13 կետը և այն փաստը, որ ««Ոսկե Կար» ՍՊԸ -ն համաձայնվել է գնման ժամանակացույցում ներառված դերձակի ծառայություն / կոստյում՝ բամբակյա, կեպիով/ ծառայության միավորի գինը նվազեցնել 3900 ՀՀ դրամի, իսկ դերձակի ծառայություն /կոստյում՝ ձմեռային դաշտային/ ծառայության միավորի գինը նվազեցնել 15000 ՀՀ դրամի, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին,

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում մատուցել Պայմանագրի №1 Հավելվածով նախատեսված ծառայությունները (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Կատարողի կողմից մատուցվող Ծառայության գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 157875000 (հարյուր հիսունյոթ միլիոն ութ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Գինը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով, Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուի մատուցած Ծառայությունների դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2019թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Համաձայնագիրն ուժի մեջ է կնքման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայությունի մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 3 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ոսկե Կար» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք. Երևան, Տիչինայի 29/2,29/4
ՀՀ ֆինանսների նախարարության	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 1150016024460100
Հ/Հ 900011144079	ՀՎՀՀ 01848257
ՀՎՀՀ 02522157	
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Ա.ՖՐԱՆԳՅԱՆ

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	ԳՄԱ կոդը	Գնման առարկան	Չ/Մ	Միավորի գին	Քանակ	Գնման ժամանակացույց, ըստ 2019թ.		
						2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, ոչ ուշ քան 10.12.19.
1	98391120/7	դերձակի ծառայություններ / Կոստյում՝ բամբակյա, կեպիով	լ-կ	3900	10000	3000	4000	3000
2	98391120/19	դերձակի ծառայություններ / Կոստյում՝ ձմեռային դաշտային	լ-կ	15000	7925	1925	3000	3000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ.ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Ոսկե Կար» ՍՊԸ
տնօրեն

Ա.ՏԻՐԱՆՅԱՆ

«ՈՍԿԵ ԿԱՐ» «ЗОЛОТОЙ ШОВ»(?) «VOSKE KAR» 01848257

Հավելված N 2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկան	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր, ոչ ուշ քան 10.12.2019
1	դերձակի ծառայություններ / Կոստյում՝ բամբակյա, կեպիով	11700000	11700000	11700000	27300000	27300000	27300000	39000000	39000000	39000000
2	դերձակի ծառայություններ / Կոստյում՝ ձմեռային դաշտային	28875000	28875000	28875000	73875000	73875000	73875000	118875000	118875000	118875000

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ.ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Ոսկե Կար» ՍՊԸ
տնօրեն

Ա.ՖՐԱՆԳՅԱՆ

«ՈՍԿԵ ԿԱՐ» «BOCKE KAP» «VOSKE KAR» 01848257